Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
նոյեմբերի 7-ի նիստի N 46
արձանագրային որոշման

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մաքսային վարչարարության ռազմավարության 2013-2014 թվականների ծրագիր

Ներածություն

Սույն ծրագրի մշակման և հաստատման կարևորագույն նպատակն է հանդիսանում սահմանել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) մաքսային ծառայությունում գալիք երկու տարիների ընթացքում նախատեսվող բարեփոխումների ռազմավարական ուղղությունները:

Փաստաթուղթը կազմվել է ՊԵԿ մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012 թվականների ծրագրի շարունակականության ապահովման տրամաբանությամբ: Սույն ծրագրում ներկայացված է մաքսային մարմնի առաքելությունը, երկարաժամկետ հատվածում մաքսային համակարգում իրականացվող ռազմավարական բարեփոխումների նպատակները, այդ նպատակների իրագործման ընթացքում ի հայտ եկող խնդիրներն, ինչպես նաև մանրամասնորեն նկարագրված են առաջադրվող խնդիրների լուծման միջոցառումներ:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Եվրոպական միության հետ համագործակցության և Եվրասիական մաքսային միությանը ՀՀ անդամակցության ուղղությամբ իրականացվող միջոցառումներում ՊԵԿ ներգրավվածությունը՝ այս ծրագրում հատուկ

ուշադրություն է դարձվել նաև ՊԵԿ մաքսային ծառայության կողմից ստանձնած պարտավորությունների ճիշտ և ժամանակին իրականացմանը՝ այդ ուղղությամբ իրականացվող բարեփոխումները տեղափոխելով ռազմավարական հենքի վրա:

Հաշվի առնելով գործարար միջավայրի լայն շրջանակների հետաքրքրվածությունը և շահագրգռվածությունը ՊԵԿ մաքսային համակարգում իրականացվող բարեփոխումներին՝ այս ծրագրում արտացոլված հիմնական նպատակների ու խնդիրների լուծման վերաբերյալ քննարկումներ են կազմակերպվել նաև գործարար միջավայրի ներկայացուցիչների և տարբեր շահագրգիռ այլ անձանց հետ:

Մաքսային վարչարարության ռազմավարության 2013-2014 թվականների ծրագրի մշակման ժամանակ հաշվի են առնվել նաև ՀՀ Նախագահի 2011 թվականի մայիսի 18-ի թիվ ՆԿ-92-Ն կարգադրությամբ հաստատված մաքսային համակարգի բարեփոխումների 2011-2013թթ. ծրագիրը, ինչպես նաև մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012թթ. ծրագրի իրականացման արդյունքները: Բացի այդ, հաշվի առնելով, որ բազմաթիվ միջազգային տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ մաքսային ծառայությունը նույնպես հանդես է գալիս որպես շահագրգիռ կողմ, ծրագրի մշակման գործընթացում հաշվի են առնվել նաև միջազգային տարբեր կազմակերպությունների, խորհրդատվական խմբերի և փորձագետների առաջարկությունները: Մասնավորապես ծրագրում տեղ են գտել ՊԵԿ-ում մեկնարկած «Թվինինգ» ծրագրի փորձագետների կողմից ներկայացված մաքսային համակարգի բարեփոխումներին, ինչպես նաև Եվրասիական մաքսային միությանը ՀՀ անդամակցությանը վերաբերող ուղղություններ և միջոցառումներ:

Սույն ծրագրի մշակման աշխատանքների ընթացքում վեր են հանվել նաև այն հնարավոր ռիսկերը և խոչընդոտները, որոնք կարող են անուղղակի կամ ուղղակի ձևով ազդեցություն ունենալ այս ծրագրի դրույթների իրականացման վրա:

Առաքելություն և տեսլական

Մաքսային մարմնի առաքելությունը

ՀՀ տնտեսական քաղաքականության մեջ մաքսային մարմիններին վերապահված է հետևյալ նպատակների իրականացումը՝ ՀՀ տնտեսական անվտանգության ապահովումը, ՀՀ անձանց տնտեսական շահերի պաշտպանությունը և ՀՀ արտաքին առևտրի դյուրացումը:

ՀՀ մաքսային մարմնի առաքելությունն է.

- ՀՀ ֆիսկալ շահերի պաշտպանություն,
- ՀՀ պետական սահմանին անազնիվ և ապօրինի առևտրի կանխում, օրինական ձեռնարկատիրության զարգացման խթանում,
- ՀՀ համապատասխան մարմինների հետ համագործակցության միջոցով ՀՀ պետական և հասարակական անվտանգության ապահովում, այդ թվում նաև շրջակա միջավայրի պահպանության ուղղված միջոցառումների իրականացման միջոցով,
- Արդյունավետ մաքսային հսկողության իրականացում, օրինական առևտրի դյուրացման և մաքսային հսկողության միջև պատշաճ հավասարակշռության ապահովում:

ՀՀ մաքսային մարմինն իր առաքելության իրականացման ժամանակ առաջնորդվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- Հասարակության և պետության ֆիսկալ շահերի պաշտպանության նպատակով վերահսկելի (սահմանափակված) և արգելված ապրանքների ապօրինի առևտրի դեմ պայքարի իրականացում՝ ռիսկերի գնահատման համակարգի կիրառման արդյունավետության բարձրացման միջոցով,

- Մաքսային համապատասխան ընթացակարգերի կիրառման միջոցով տեղական արտադրանքի մրցունակության բարձրացում,
- Մաքսային հսկողության բարելավման և կատարելագործման արդյունքում ՀՀ մաքսային սահմանով ապրանքների հոսքին նվազագույն միջամտության և ձեռնարկատիրության նկատմամբ նվազագույն վարչարարական գործիքների կիրառության ապահովում,
- Գնահատվող ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության արդյունավետ և պարբերական ընդլայնման միջոցով ապրանքների միջազգային փոխադրումների մատակարարման շղթաների վերահսկում և կառավարում,
- Ձեռնարկատիրության, պետական շահագրգիռ գերատեսչությունների և այլ պետությունների մաքսային մարմինների հետ համագործակցության զարգացում և ընդլայնում:

Մաքսային մարմնի տեսլականը

Միջազգային առևտրի ծավալների մեծացման, տնտեսական ինտեգրացիայի բարձր աստիճանի համատեքստում մաքսային մարմինը ևս պետք է դրսևորի վերակառուցման, ժամանակին համընթաց դինամիկ զարգացմանն ուղղված քաղաքականություն: Հետևաբար ՀՀ մաքսային մարմինն իր առջև դրված խնդիրների լուծման կարևորագույն բաղադրիչ է համարում հստակ պլանավորված միջոցառումների իրականացմանն ուղղված քայլերի իրականացումը, որոնք էլ իրենց հերթին կապահովեն ռազմավարական ծրագրում արտացոլված նպատակները և խնդիրների լուծումը:

Մաքսային վարչարարության ռազմավարության մշակման հիմք է հանդիսացել երկարաժամկետ կտրվածքում մաքսային վարչարարության որակապես նոր մակարդակի ձևավորման, բիզնես միջավայրի բարելավման և բիզնես գործընթացների պարզեցման ապահովման անհրաժեշտությունը:

Այսպիսով երկարաժամկետ հատվածում մաքսային մարմնի համար մաքսային վարչարարության զարգացման հեռանկարն է.

Միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան մաքսային համակարգի առկայություն՝ ապահովելով

- Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներին բարձրորակ մաքսային ծառայությունների մատուցում,
- Արդյունավետ մաքսային հսկողություն,
- Պետական բյուջե մուտքագրվող մաքսային և այլ եկամուտների սահմանված ժամկետներում հավաքագրում:

ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարական նպատակ 1.

1. **ՀՀ մաքսային օրենսդրության կատարելագործում հիմք ընդունելով առաջավոր փորձ ունեցող երկրներում և միություններում ներդրված համակարգերը**

Մաքսային համակարգում իրականացվող բարեփոխումներն իրենց բնույթով շարունակական են՝ պայմանավորված ոլորտի դինամիկ զարգացման և տնտեսական առաջընթացի արագ տեմպերին մաքսային համակարգի ինտեգրման անհրաժեշտությամբ: Հետևաբար վերջին շրջանում ՊԵԿ մաքսային համակարգում իրականացվող բարեփոխումները թևակոխել են մի նոր, որակապես էլ ավելի բարձր մակարդակ: ՊԵԿ-ի մաքսային ծառայությունը, հանդիսանալով արտաքին առևտրի կարգավորման առանցքային մարմիններից մեկը, ներգրավված է միջազգային համագործակցության ընդլայնմանն ուղղված տարբեր գործընթացներում, որոնք ենթադրում են ՀՀ մաքսային օրենսդրության վերանայում՝ միջազգային առևտրի զարգացման միտումների փոփոխությանը, ինչպես նաև ՀՀ միջազգային մակարդակներում ստանձնած իրավունքներին և պարտավորություններին համապատասխան: Այս բարդ և ժամանակատար օրենսդրական բարեփոխումների գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու համար ՊԵԿ-ն նաև օգտվում է Եվրոպական Միության «Թվինինգ» աջակցման գործիքից և Եվրասիական մաքսային միության շրջանակներում ընդունված մաքսային օրենսդրական կարգավորումներից :

Հիմնական խնդիրներ

1) Միջազգային տնտեսական և քաղաքական գործընթացներին համահունչ օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում,
2) ՀՀ մաքսային օրենսդրության մշակում Եվրոպական միության և Եվրասիական մաքսային միության շրջանակներում ՀՀ որդեգրած քաղաքականության սկզբունքներին և ուղղություններին համապատասխան,

3) ՊԵԿ-ում մեկնարկած՝ «Թվիննինգ» ծրագրի շրջանակներում միջազգային փորձագետների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա օրենսդրական բարեփոխումների իրականացում՝ Եվրասիական մաքսային միությանը ՀՀ անդամակցությանն ուղղված միջոցառումների համադրմամբ

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/հ	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	Շարունակել «Թվիննինգ» ծրագրի շրջանակներում իրականացված համեմատական վերլուծության հիման վրա պլանավորված և ընթացքի մեջ գտնվող օրենսդրական բարեփոխումները, որոնք ուղղված են ՀՀ մաքսային համակարգի զարգացմանը և համադրելի են Եվրասիական մաքսային միության շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների հետ	2014թ. I եռամսյակ շարունակական
2.	Ձեռնարկել համապատասխան միջոցներ մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին Կիոտոյի վերանայված կոնվենցիայի դրույթների կիրարկման ուղղությամբ	2013թ. IV եռամսյակ
3.	Մաքսային ձևակերպումների ժամանակ փաստաթղթաշրջանառության գործընթացի պարզեցում	2014թ. III եռամսյակ
4.	«Թվիննինգ» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների, ուսումնական այցերի և աշխատաժողովների կազմակերպում, համակարգում և սահմանված պարբերականությամբ համապատասխան հաշվետվությունների և օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների ներկայացում	2013թ. III եռամսյակ և շարունակական
5.	Մաքսային միության երկրների միջև տեղեկատվության փոխանակումն ապահովող ինստիտուցիոնալ կառուցվածքն ուսում-նասիրելու նպատակով Մաքսային միության երկրներ ճանաչողական այցերի կազմակերպում	2014թ. I եռամսյակ
6.	Մաքսային միությանը միանալու ճանապարհային քարտեզի նախագծի մշակմանը մասնակցություն	2013թ. IV եռամսյակ
7.	Եվրասիական տնտեսական հանձնաժողովում ֆինանսական, վիճակագրական և մակրոտնտեսական ոլորտներում հարցերի քննարկման մասնակցություն	2014թ. I եռամսյակ և շարունակական
8.	Մաքսային միության երկրներում կիրառվող մաքսային բրոքերների ինստիտուտի՝ ՀՀ-ում ներդնելու վերաբերյալ գործարար համայնքի հետ համատեղ համապատասխան ուումնասիրությունների իրականացում և հետագա քայլերի հստակեցում	2014թ. I եռամսյակ

9.	ՀՀ՝ Եվրասիական մաքսային միությանը անդամակցությունից բխող մաքսային ընթացակարգերի ներդաշնակեցում, միասնական փաստաթղթերի կիրառման հնարավորության ուսումնասիրություն	2014թ. IV եռամսյակ
10.	Վերլուծել և ՀՀ մաքսային օրենսդրության և Եվրասիական մաքսային միության օրենսդրության՝ դրույթների տարբերությունները և գնահատել ՀՀ մաքսային օրենսդրության մոտարկման նպատակահարմարությունը	2014թ. III եռամսյակ
11.	Մշակել և հրապարակել մաքսային արժեքի որոշման մեթոդների պատշաճ կիրառման կանոններ (հրահանգներ)՝ տնտեսվարող սուբյեկտների և մաքսային ծառայողների համար	2013թ. IV եռամսյակ
12.	Ինչպես ներմուծման ժամանակ, այնպես էլ հետբացթողումային մաքսային հսկողության փուլերում մաքսային արժեքի որոշման միատեսակ կանոնների (ուղեցույցներ)՝ մշակում մաքսային ծառայողների համար	2013թ. IV եռամսյակ
13.	ՀՀ մաքսային օրենսգրքում ներառել պարտադիր սակագնային տեղեկատվությանն առնչվող հիմնական դրույթներ և իրականացնել՝ նախքան ներմուծումը պարտադիր դասակարգման տեղեկատվության համար ծրագրերի ներդրմանն ուղղված միջոցառումներ	2014թ. IV եռամսյակ
14.	Պատրաստել ապրանքների դասակարգման վերաբերյալ ձեռնարկ	2013թ. IV եռամսյակ
15.	Վերանայել ՀՀ մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետը, համաձայն որի ապրանքների՝ «ներմուծում ազատ շրջանառություն համար» մաքսային ռեժիմով ներմուծման և 180 օրվա ընթացքում վերաարտահանման դեպքում մաքսատուրքերը վերադարձվում են	2014թ. IV եռամսյակ
16.	Ազատ մաքսային պահեստների ու առևտրի ազատ գոտիների կարգավիճակի վերանայում և անհրաժեշտության դեպքում դրանց ՀՀ մաքսային տարածքում ընդգրկելու վերաբերյալ ՀՀ մաքսային օրենսգրքում համապատասխան փոփոխության իրականացում	2014թ. III եռամսյակ
17.	ՀՀ մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ձևակերպման գործընթացում ապրանքների նախնական դասակարգման ինստիտուտի ներդրում	2015. I եռամսյակ

Ռազմավարական նպատակ 2.

1. **Սահմանների համալիր կառավարման համակարգի սկզբունքներին համահունչ պետական սահմանի անցման կետերում մաքսային ընթացակարգերի մշակում և ներդրում՝ հաշվի առնելով նաև «մեկ կանգառ/մեկ պատուհան» սկզբունքը:**

Միջազգային բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների աճին զուգընթաց անհրաժեշտություն է առաջանում պետական սահմանի անցման կետերում որակյալ ծառայությունների ապահովման՝ քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների համար առավել աննկատ դարձնելով սահմանահատման ընթացակարգերը: Ժամանակակից չափանիշներին համապատասխան պետական սահմանի անցման կետեր ունենալու խնդիրը համարվում է ՊԵԿ-ի գերակա խնդիրներից մեկը: Սակայն ժամանակակից պետական սահմանի անցման կետեր ունենալու խնդիրը չի կարող փոխկապակցված չլինել պետական սահմանում մաքսային և այլ ընթացակարգերի պարզեցման և այդ ընթացակարգերի իրականացման համար ծախսվող ժամանակահատվածի կրճատման հետ: Հետևաբար ՊԵԿ-ը պետական սահմանի անցման կետերը հիմնովին վերակառուցելու հետ մեկտեղ ձեռնամուխ է եղել ներդնել պետական սահմանի անցման կետերում սահմանահատման գործընթացների առավելագույն միասնականացված՝ սահմանների համալիր կառավարման համակարգի սկզբունքները: Միաժամանակ, ՊԵԿ-ը, հաշվի առնելով ոլորտում իրականացվող աշխատանքների միասնական իրականացման անհրաժեշտությունը, սահմանների համալիր կառավարման համակարգի ներդրման աշխատանքներն իրականացնում է պետական սահմանի անցման կետերում պետական մարմինների կողմից ծառայություններ մատուցող տարբեր մարմինների հետ սերտ փոխհամագործակցությամբ:

Հիմնական խնդիրներ

1) Պետական սահմանի անցման կետերում միջգերատեսչական և ներգերատեսչական համագործակցության ընդլայնում և կանոնակարգում, տեղեկատվության նույնականացման սկզբունքների մշակում,
2) Միջգերատեսչական աշխատանքային խմբի շրջանակներում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման և կրկնվող գործառույթների բացառման աշխատանքների համակարգում:

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/հ	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	ՀՀ վարչապետի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 911-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա», «Գոգավան» անցման կետերի արդիականացում» ծրագրի իրականացման ժամանակացույցի միջոցառումների իրականացման նկատմամբ հսկողության և հաշվետվողականության ապահովում:	2013թ. III եռամսյակ և շարունակական
2.	Պետական սահմանի անցման կետերում տարբեր գերատեսչությունների հետ փոխհամագործակցության ուղղությունների հստակեցում սահմանների համալիր կառավարման սկզբունքներին համահունչ	2013թ. IV եռամսյակ
3.	ՀՀ կառավարության կողմից «Մեկ պատուհան, մեկ կանգառ» համակարգի ներդրման համար պատասխանատու լիազոր մարմնի նշանակման վերաբերյալ այլ շահագրգիռ մարմինների դիրքորոշման քննարկում, հստակեցում և առաջարկության ներկայացում	2013թ. IV եռամսյակ
4.	Պետական սահմանի անցման կետերում տարբեր գերատեսչությունների հետ փոխհամագործակցության շրջանակներում տեղեկատվության փոխանակման ուղղությամբ համապատասխան իրավական ակտերի մշակում	2013թ. IV եռամսյակ
5.	Պետական սահմանի անցման կետերում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման նպատակով, գործառույթների հստակեցում, իրավական փաստաթղթերի վերլուծություն, և դրանցում փոփոխությունների իրականացում	2014թ. I եռամսյակ
6.	«Մեկ պատուհան, մեկ կանգառ» համակարգի ներդրման նպատակով ներպետական և միջազգային իրավական դաշտի ուսումնասիրություն, հայեցակարգային փաստաթղթի մշակում՝ ներգրավելով նաև գործարար աշխարհի ներկայացուցիչներին	2014թ. II եռամսյակ

Ռազմավարական նպատակ 3.

1. **Մշակել և ներդնել մաքսային ծառայողների պարբերաբար վերապատրաստման, ուսուցման համակարգ, կազմակերպել համապատասխան դասընթացներ հասարակության լայն շերտերի համար:**

Մաքսային համակարգում վարչարարության կատարելագործման կարևոր և առաջնային ուղղություններից է նաև մաքսային ծառայողների վերապատրաստման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները: Մաքսային համակարգում իրականացվող ցանկացած բարեփոխում օբյեկտիվ անհրաժեշտություն է ստեղծում կազմակերպել համապատասխան դասընթացներ՝ դինամիկ փոփոխություններին և կիրառվող նոր տեխնոլոգիաներին ծանոթանալու և դրանք պատշաճ օգտագործելու նպատակով: Որպես որակյալ աշխատակիցների առկայության լավագույն մեթոդ միանշանակ կարևորվում է յուրաքանչյուր մաքսային ծառայողի վերապատրաստումը՝ ոլորտային մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացման միջոցով: Մյուս կողմից ՊԵԿ-ի վերապատրաստման ծրագրերի իրականացման արդյունավետության ապահովման տեսանկյունից կարևորվում է ինչպես օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից լավագույն փորձագետների ներգրավմամբ վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, այնպես էլ տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում միջազգային լավագույն ուսումնական հաստատություններում մաքսային ծառայության դասախոսական կազմի վերապատրաստման և դասավանդման հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը:

Հիմնական խնդիրներ

1) Յուրաքանչյուր տարի մշակել մաքսային ծառայողների վերապատրաստման ծրագիր,
2) Ըստ անհրաժեշտության մշակել և կազմակերպել համապատասխան ուսուցողական դասընթացներ տարբեր շահագրգիռ կողմերի համար:

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/հ	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	Մշակել մաքսային ծառայողների վերապատրաստման ծրագիր ինչպես ընդհանուր մասնագիտական, այնպես էլ, ըստ անհրաժեշտության, խիստ մասնագիտական հմտությունների կատարելագործման նպատակով	2013թ. IV եռամսյակ
2.	Միջազգային տարբեր կառույցների հետ համագործակցության ակտիվացում ուսումնական ծրագրերի մեջ ներգրավման և իրականացման նպատակով	2013թ. III եռամսյակ և շարունակական
3.	ՊԵԿ Ուսումնական կենտրոնի տեխնիկական հնարավորությունների զարգացում	2014թ. III եռամսյակ
4.	ՊԵԿ մաքսային ծառայության դասախոսական կազմի համար վերապատրաստման դասընթացների և հմտությունների կատարելագործման ծրագրերի մշակում և իրականացում	2013թ. IV եռամսյակ
5.	Օտարերկրյա պետությունների մաքսային ծառայությունների հետ համատեղ մաքսային ուսումնական ծրագրերի մշակում և իրականացում	2013թ. III եռամսյակ և շարունակական
6.	Տեղեկատվական տեխնոլոգիաների աշխատակազմի համար վերապատրաստման ծրագրի մշակում	2013թ. IV եռամսյակ

Ռազմավարական նպատակ 4.

1. **Ընդլայնել պետական կառավարման այլ մարմինների, տնտեսվարող սուբյեկտների և հասարակության հետ փոխհամագործակցությունը՝ բարձրացնելով փոխվստահության և տեղեկատվության արագ ապահովման մակարդակը:**

Արտաքին աշխարհի հետ առևտրային հարաբերությունների ընդլայնման, ապրանքաշրջանառության մեծացման համատեքստում մաքսային ծառայությունները տնտեսվարող սուբյեկտներին դիտարկում են որպես գործընկերներ՝ որպես մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման նոր, ժամանակակից մեթոդ: Վերջին մի քանի տարիների ընթացքում զարգացած երկրներում «մաքսային ծառայություն-տնտեսվարող սուբյեկտ» փոխհարաբերությունները ձևավորվում են որակապես նոր մակարդակում՝ ինչպես փոխվստահության, այնպես էլ փոխհամագործակցության տեսանկյունից: ՊԵԿ-ի առաջնային խնդիրներից է տնտեսվարող սուբյեկտների հետ հարաբերությունները ձևավորել գործընկերային մթնոլորտում, որի համար անհրաժեշտ է վստահության երաշխիքներ ինչպես տնտեսվարող սուբյեկտների կողմից, այնպես էլ մաքսային ծառայության կողմից: Գործընկերային փոխհամագործակցությունը կարևոր է նաև պետական կառավարման մարմինների միջև անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման և տրամադրման տեսանկյունից: Այս ամենը համակարգված կիրառելու պայմաններում ՊԵԿ-ը նպատակ ունի ընդհանուր բարձրացնել հասարակության լայն շերտերում տեղեկացվածության և փոխվստահության մակարդակը՝ շահագրգիռ կողմերին մասնակից դարձնելով համակարգում իրականացվող բազմաոլորտ բարեփոխումների մշակման և իրականացման գործընթացներում:

Հիմնական խնդիրներ

1) ՊԵԿ պաշտոնական կայքի և հեռախոսազանգերի կենտրոնի կարողությունների կատարելագործում,
2) ՊԵԿ-ում գործող խորհրդակցական մարմնի հանդիպումների կազմակերպման և հարցերի քննարկման ընթացակարգի սահմանում,
3) Մշակել ներմուծման և արտահանման մաքսատուրքերի և հարկերի կառավարման ժամանակակից համակարգ՝ հիմնված ապրանքների դասակարգման, սակագների և ծագման երկրի, մաքսային արժեքի որոշման ու արդյունավետ հսկողության և աուդիտի կազմակերպման վրա:

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/h	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	ՊԵԿ պաշտոնական կայքի պարբերաբար թարմացման աշխատանքների շարունակականության ապահովում, ըստ անհրաժեշտության նոր բաժինների և ենթաբաժինների ստեղծում	2013թ. III եռամսյակ և շարունակական
2.	Եվրոպական և Եվրասիական միությունների անդամ երկրների մաքսային ծառայությունների պաշտոնական կայքերի կառուցվածքի ուսումնասիրություն և համեմատական աշխատանքների իրականացում	2013թ. III եռամսյակ և շարունակական
3.	ՊԵԿ-ում գործող հեռախոսազանգերի կենտրոնի կարողությունների զարգացման ուղղությունների բացահայտում	2013թ. IV եռամսյակ
4.	Մաքսային և առևտրային հարցերի վերաբերյալ օրենսդրական առաջարկների ու ընթացակարգերի շուրջ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների հետ պարբերաբար խորհրդակցությունների անցկացում	2013թ. III եռամսյակ և շարունակական
5.	ՀՀ մաքսային ծառայության պաշտոնական կայքում ստեղծել բաժին, որի միջոցով հանրությունը կարող է ծանոթանալ մաքսային որոշումների բողոքարկման ընթացակարգին	2013թ. IV եռամսյակ
6.	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար մաքսային ավտոմատացված համակարգից օգտվելու հնարավորությունների ընդլայնում	2013թ. III եռամսյակ և շարունակական

Ռազմավարական նպատակ 5.

1. **Ընդլայնել այլ երկրների մաքսային մարմինների, Եվրոպական և Եվրասիական միությունների կառույցների և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:**

ՊԵԿ-ն ակտիվորեն ներգրավված է միջազգային տարբեր կառույցների շրջանակներում համագործակցության տարբեր ծրագրերում: ՊԵԿ-ի առաջնային խնդիրներից է ոչ միայն բազմակողմ համագործակցության ընդլայնումը, տարբեր ձևաչափերով մաքսային հարցերի վերաբերյալ հանդիպումներին ակտիվ մասնակցության ապահովումը, այլ նաև երկկողմանի հարաբերությունների ընդլայնումը և մաքսային հարցերով փոխօգնության և փոխհամագործակցության հուշագրերի և համաձայնագրերի նախապատրաստման և կնքման միջոցով ավելի սերտ երկկողմանի հարաբերությունների զարգացումը: Վերջին տարիների ընթացքում ՊԵԿ-ն ակտիվ ներգրավված է Համաշխարհային մաքսային կազմակերպության շրջանակներում իրականացվող տարբեր ծրագրերում և միջոցառումներում, ինչն էլ ավելի արդյունավետ և որակյալ է դարձնում մաքսային ծառայության առջև դրված ռազմավարական խնդիրների լուծման ուղիների մշակումը: ՊԵԿ-ն առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է պահում նաև տարածաշրջանային մակարդակում երկկողմ հարաբերությունների դինամիկ զարգացման հեռանկարները և ուղղությունները: Այդ առումով հայ-վրացական և հայ-իրանական հարաբերությունները զարգանում են փոխվստահության բարձր մակարդակի վրա՝ հաշվի առնելով սերտ համագործակցության, փոխօգնության, մաքսային ընթացակարգերի միասնականացման սկզբունքները:

Հիմնական խնդիրներ

1) Տարածաշրջանային և ենթատարածաշրջանային մակարդակում տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության և արդյունավետության ընդլայնում, մասնավորապես Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության, Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագրի և այլ ծրագրերի շրջանակներում,
2) Այլ երկրների մաքսային մարմինների հետ փոխօգնության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի կնքում:

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/հ	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության և ՀՀ մաքսային մարմինների միջև երկկողմանի փոխհամագործակցության ընդլայնում և զարգացում	2013թ. III եռամսյակ և շարունակական
2.	ՀՀ և առավել մեծ առևտրային ծավալ ունեցող երկրների հետ մաքսային հարցերում համագործակցության անհրաժեշտության ուսումնասիրություն և համապատասխան համաձայնագրերի նախագծերի պատրաստում	2013թ. III եռամսյակ և շարունակական
3.	Քննարկել Հայաստանի՝ Ժամանակավոր ընդունման կոնվենցիային (Ստամբուլյան կոնվենցիա) միանալու նպատակահարմարությունը	2014թ. IV եռամսյակ
4.	1987 թվականի մայիսի 20-ի «Ապրանքների առևտրում ընթացակարգերի պարզեցման» մասին Կոնվենցիային միացման աշխատանքների մեկնարկում	2014թ. IV եռամսյակ
5.	1987 թվականի մայիսի 20-ի «Ընդհանուր տարանցման ընթացակարգերի» մասին կոնվենցիաին միացման աշխատանքների մեկնարկում	2014թ. III եռամսյակ
6.	Այլ երկրների համապատասխան գերատեսչությունների հետ տվյալների փոխանակման կարգի նախագծի մշակում և ընդունում	2014թ. II եռամսյակ

Ռազմավարական նպատակ 6.

1. **Մաքսային բնագավառում հանցագործությունների և մաքսային կանոնների խախտումների դեմ պայքարի մեթոդների ուժեղացում և կատարելագործում:**

Համաշխարհային առևտրի ծավալների աճին զուգընթաց մեծանում է նաև ապրանքային հոսքերի շղթայի ընթացքում մաքսային կանոնների խախտման հավանականությունը: Այս հանգամանքը չի կարող չանդրադառնալ մաքսային մարմինների գործելակերպի և ձեռնարկվող միջոցառումների վրա, մասնավորապես՝ մաքսային ծառայությունը նախատեսում է կազմակերպել տարբեր ուսուցողական գործնական դասընթացներ թիրախավորված մաքսային ծառայողների համար: Բացի այդ ակտիվ համագործակցության շրջանակներում բարեփոխումներ են իրականացվում նաև օրենսդրական ոլորտում՝ նպատակ ունենալով իրավական բազան համահունչ դարձնել միջազգային լավագույն փորձին և չափանիշներին: Ոլորտում իրականացվող աշխատանքներն իրականացվում են ոչ միայն ազգային, տարածաշրջանային մակարդակներում, այլ նաև միջազգային տարբեր կոնվենցիաների և համաձայնագրերի անդամակցության համատեքստում:

Հիմնական խնդիրներ

1) Մաքսային կանոնների խախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով տեխնիկական և մարդկային ռեսուրսների զարգացում,
2) ՀՀ մաքսային տարածքում օպերատիվ մաքսային հսկողության կարողությունների ընդլայնում:

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/հ	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	Մաքսային կանոնների խախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով հարևան երկրների հետ ոլորտային համագործակցության ակտիվացում	2013թ. III եռամսյակ և շարունակական
2.	Մաքսային ծառայությունում կինոլոգիական կենտրոնի հնարավորությունների զարգացում	2013թ. III եռամսյակ և շարունակական
3.	Մաքսային կանոնների խախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների իրականացում	2014թ. III եռամսյակ

Ռազմավարական նպատակ 7.

1. **Մշակել և ներդնել պարզեցված մաքսային ընթացակարգերի կիրառման համակարգ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար՝ անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմք ստեղծելով «Լիազորված տնտեսվարող օպերատորների» համակարգի ներդրման և կիրառման համար:**

Տարբեր միջազգային կազմակերպությունների շրջանակներում մաքսային համագործակցության առանցքային առաջնահերթություններից է մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման հիմնախնդիրները: Զարգացած երկրներում այս խնդրի լուծման վերաբերյալ արդեն իսկ իրականացվել են լուրջ աշխատանքներ՝ մաքսային ընթացակարգերի պարզեցված համակարգի

մշակումը և ներդրում տեղափոխելով որակապես նոր մակարդակի վրա: Մաքսային ծառայությունը, կարևորելով երկրում մաքսային ընթացակարգերի առավելագույնս պարզեցման աշխատանքները՝ իր առջև նպատակ է դրել մշակել, սահմանել և փուլային տարբերակով ներդնել պարզեցված մաքսային ընթացակարգերի կիրառման համակարգ այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք իրենց գործունեության ողջ ընթացքում ՊԵԿ-ի կողմից կճանաչվեն որպես «բարեխիղճ»: Այդ համակարգի մշակումը և ներդրումը մաքսային համակարգում հնարավորություն կստեղծի շարունակել զարգացած երկրներում արդեն իսկ կիրառվող «Լիազորված տնտեսվարող օպերատորների» համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքները:

Հիմնական խնդիրներ

1) ՀՀ մաքսային օրենսդրությունում համապատասխան դրույթների ապահովում պարզեցված մաքսային ընթացակարգերի սահմանման համար,

2) Բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների ընտրության չափորոշիչների մշակում, հաստատում և ներդրում:

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/հ	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	Ուսումնասիրել եւ բացահայտել այն հնարավոր մեխանիզմները, որոնց իրավական ապահովման դեպքում հնարավոր կլինի սահմանել պարզեցված մաքսային ընթացակարգեր	2013թ. IV եռամսյակ
2.	Իրականացնել վերլուծություն բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների հասկացության, դրանց չափանիշների սահմանման և ընտրության ընթացակարգերի վերաբերյալ	2013թ. IV եռամսյակ
3.	Սահմանել բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների ընտրության և գնահատման չափորոշիչներ	2013թ. IV եռամսյակ
4.	Անհրաժեշտության դեպքում ելնելով բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար նախատեսված պարզեցված ընթացակարգերից՝ մշակել տեղեկատվական համակարգերի ֆունկցիոնալ նկարագիրը	2014թ. I եռամսյակ

Ռազմավարական նպատակ 8.

1. **Մաքսային համակարգի տեխնիկական և մասնագիտական կարողությունների ընդլայնում, հսկողական տարբեր մեթոդների ներդրում և կատարելագործում**

Մաքսային ընթացակարգերի պարզեցումը և ընդհանրապես տնտեսվարող սուբյեկտ – մաքսային ծառայություն անմիջական կապի նվազեցումը չի ենթադրում մաքսային հսկողության թուլացում: ՊԵԿ-ը մի կողմից ակտիվ քայլեր է ձեռնարկում պարզեցնել մաքսային ընթացակարգերը, մյուս կողմից պարբերաբար վերազինում է մաքսային հսկողության տեխնիկական սարքակազմը, վերանայում է մաքսային հսկողության տարբեր մեթոդներ և եղանակներ: Մաքսային ընթացակարգերի պարզեցմանը զուգահեռ ՊԵԿ-ի նպատակն է զարգացնել ոչ միայն մաքսային հսկողության տեխնիկական և մեթոդական կարողությունները, այլ նաև ընդլայնել հետբացթողումային մաքսային հսկողության կարողությունները ինչպես օրենսդրական, այնպես էլ տեխնիկական և մարդկային ռեսուրսների առումով:

Մաքսային համակարգում իրականացվող օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներն օբյեկտիվորեն անհրաժեշտություն են առաջացնում մաքսային համակարգը վերազինել ժամանակակից տեխնիկական միջոցներով և համակարգերով: Ապրանքների առավել արագ զննման, ճշգրիտ դասակարգման, խնդրահարույց ապրանքների փորձաքննությունն արագ կազմակերպելու և տնտեսվարող սուբյեկտներին արագ և որակյալ սպասարկելու կարևորագույն պայմաններից է հանդիսանում մաքսային ծառայությունում մաքսային լաբորատորիաների առկայությունը և դրանց պատշաճ ձևով շահագործումը: Այդ առումով ՊԵԿ-ն ձեռնամուխ է եղել համակարգում ստեղծել ժամանակակից մաքսային լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և սպասարկման անձնակազմով:

Հիմնական խնդիրներ

1) Մաքսային հսկողության ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառության ընդլայնում,

2) Հետբացթողումային մաքսային հսկողության համակարգի զարգացում,

3) Ռիսկային ապրանքների դասակարգման և փորձաքննության նպատակով մաքսային լաբորատորիաների ստեղծում,

4) Մաքսային լաբորատորիաների արդյունավետ շահագործում:

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/h	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	Մաքսային տարածքում տրանսպորտային միջոցների տեղաշարժի հսկողության համակարգի ներդրում, որով հսկողություն կսահմանվի հանրապետության տարածքով տեղաշարժվող, մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցների նկատմամբ	2014թ. IV եռամսյակ. (ֆինանսավորման առկայության դեպքում)
2.	Հետբացթողումային հսկողության համակարգի զարգացման հնարավորությունների բացահայտում և կատարելագործում	2013թ. IV եռամսյակ
3.	Հետբացթողումային հսկողության նպատակով առկա տեխնիկական միջոցների հնարավորությունների լիարժեք օգտագործում	2013թ. IV եռ.
4 .	Մաքսային լաբորատորիաների ստեղծման նպատակով համապատասխան իրավական ապահովվածություն	2014թ. II եռամսյակ (ֆինանսավորման առկայության դեպքում)
5.	Մաքսային լաբորատորիաների գործարկման նպատակով անհրաժեշտ սարքավորումների ցանկի սահմանում	2013թ. IV եռամսյակ (ֆինանսավորման առկայության դեպքում)

6.	Մաքսային լաբորատորիաների արդյունավետ գործարկման համար համապատասխան անձնակազմի վերապատրաստում	2014թ. IV եռամսյակ
7.	«Շիրակ» օդանավակայանի մաքսային կետի՝ ճառագայթային հսկողության սարքավորումներով վերազինում և համապատասխան աշխատակիցների վերապատրաստում	2013թ. IV եռամսյակ

Ռազմավարական նպատակ 9.

1. Մաքսային համակարգում ապրանքների ծագման երկրի հավաստագրերի տրամադրման համակարգի մշակում և ներդրում:

ՀՀ կառավարության և ՊԵԿ-ի առջև դրված կարևոր խնդիրների շարքին է դասվում ապրանքների ծագման երկրի հավաստագրերի տրամադրման ինստիտուտի և գործառույթների վերապահումը ՊԵԿ-ին: Այս գործընթացը մաքսային ձևակերպումների ընթացակարգերի հետ միևնույն պետական մարմնում կազմակերպելու համար պահանջվում է ինչպես միջազգային փորձագիտական աջակցություն, այնպես էլ ինստիտուցիոնալ և որակյալ կադրային ռեսուրսների ապահովվածություն, որին հասնելու համար ՊԵԿ-ն իր առջև դրել է հստակ նպատակներ և խնդիրներ:

Հիմնական խնդիրներ

1) Ապրանքների ծագման երկրի հավաստագրերի տրամադրման ընթացակարգերի սահմանում և գործարկում,

2) Ծագման երկրի հավաստագրերի տրամադրման գործընթացում ծագող ռիսկերի կառավարման մեխանիզմների մշակում:

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/հ	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	Ապրանքների ծագման երկրի հավաստագրերի տրամադրման համապատասխան կարիքների գնահատում	2014թ. II եռամսյակ
2.	Ապրանքների ծագման երկրի հավաստագրերի տրամադրման ընթացակարգերի սահմանում	2014թ. IV եռամսյակ
3.	Ապրանքների ծագման երկրի հավաստագրերի տրամադրման գործընթացում ռիսկերի բացահայտում, չափանիշների մշակում և կառավարում	2014թ. IV եռամսյակ
4.	Սակագնային դասակարգման և ծագման կանոնների վերաբերյալ նախնական տեղեկատվության համակարգի ներդրում և կիրառում	2014թ. IV եռամսյակ և շարունակական

Ռազմավարական նպատակ 10.

1. Մաքսային համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի կարողությունների զարգացում

Մաքսային հսկողության համակարգի զարգացման ուղղությամբ ՊԵԿ-ի կողմից իրականացվում են համալիր միջոցառումներ, որոնք ամրագրված են տարբեր իրավական ակտերով: Սակայն, գիտակցելով հսկողական միջոցառումների և մեթոդների դինամիկ զարգացման, տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարմամբ թիրախային միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությունը, ինչպես նաև տեղեկատվական տարբեր համակարգերի ինտեգրման հրամայականն ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ շրջանակներում, ՊԵԿ-ն տեխնիկական, ֆինանսական, փորձագիտական աջակցության տարբեր գործիքների միջամտությամբ նպատակ է դրել

դինամիկ կերպով զարգացնել ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգը և կենտրոնական, և տարածաշրջանային ենթակառուցվածքներում: Այս նպատակի արդյունավետ իրականացումը հնարավորություն կընձեռնի համակարգում ունենալ միասնական տեղեկատվական դաշտ՝ տնտեսվարող սուբյեկտների համար ապահովելով արդյունավետ տեղեկատվական հոսքերի կառավարում և դյուրացում:

Հիմնական խնդիրներ

1) Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի կարողությունների և գործառույթների զարգացում,

2) Ռիսկերի կառավարման համակարգի հնարավորությունների ընդլայնում և կիրառում:

Միջոցառումներ առաջադրված խնդիրները լուծելու համար

Հ/h	Միջոցառում	Կատարման վերջնաժամկետ
1.	Զարգացած երկրների լավագույն փորձի կիրառմամբ մշակել մաքսային ձևակերպումների ընթացքում «Մեկ պատուհան» համակարգերի տեխնիկական նկարագիր	2013թ. IV եռամսյակ և շարունակական
2.	Զարգացած երկրների լավագույն փորձի կիրառմամբ իրականացնել մաքսային ձևակերպումների ընթացքում «Մեկ պատուհան» համակարգերի շարունակական ներդրումը	2014թ. IV եռամսյակ և շարունակական (ֆինանսավորման առկայության դեպքում)
3.	Ներդնել համապատասխան ընթացակարգ, ըստ որի նախքան իրավական ակտերի նախագծերի և տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի մշակումը անհրաժեշտ կլինի պատրաստել բիզնես գործընթացի նկարագիր/մոդել	2013թ. IV եռամսյակ

4.	ՊԵԿ-ի տեղեկատվական համակարգերի վերաբերյալ տեխնիկական աջակցություն տրամադրելու նպատակով համապատասխան մասնագիտական խմբի ստեղծում (Help Desk)	2013թ. IV եռամսյակ
5.	Ներդնել մաքսային հայտարարագրերում լրացումների և փոփոխությունների իրականացման ընթացակարգ	2013թ. IV եռամսյակ
6.	Ընդունված իրավական ակտերի հիման վրա մշակել նախնական հայտարարագրման և ամբողջովին էլեկտրոնային հայտարարագրման համար անհրաժեշտ համակարգերի տեխնիկական նկարագրերը	2014թ. I եռամսյակ
7.	Ներդնել նախնական հայտարարագրման և ամբողջովին էլեկտրոնային հայտարարագրման համակարգերը	2014թ. IV եռամսյակ (ֆինանսավորման առկայության դեպքում)
8.	Իրականացնել ՀՀ մաքսային օրենսգրքի և ենթաօրենսդրական ակտերի՝ ռիսկերի կառավարման ոլորտին առնչվող փոփոխություններ՝ հիմք ընդունելով զարգացած երկրների լավագույն փորձը	2014թ. II եռամսյակ
9.	Մշակել TWM համակարգում ռիսկի պրոֆիլների շրջանակում իրականացվելիք միջոցառումների և մաքսային հսկողության արդյունքների արտացոլման համակարգերի տեխնիկական նկարագրերը	2014թ. II եռամսյակ
10.	Ռիսկի պրոֆիլների և ընտրողականության համակարգի զարգացում	2014թ. II եռամսյակ
11.	Դեղերի և դեղամիջոցի ներմուծման հավաստագրի էլեկտրոնային ստացման ներդրում «Մեկ պատուհան» համակարգի միջոցով	2013թ. IV եռամսյակ

Մաքսային վարչարարության ռազմավարության 2013-2014թթ. ծրագրի իրագործման հավանական ռիսկեր և ենթադրություններ

Մաքսային վարչարարության ռազմավարության 2013-2014թթ. ծրագրի իրականացմանը խոչընդոտող ռիսկերը կարող են կրել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդել սույն ռազմավարությամբ մաքսային մարմինների որդեգրած հիմնական նպատակների ամբողջովին և արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես այդ ռիսկերն են. ՀՀ տնտեսական թիրախների առաջնահերթության վերադասավորումը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների փոփոխության պայմաններում, ինչպես նաև բավարար ֆինանսական ռեսուրսների պակասը կամ բացակայությունը: